ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-3202 <<08>> 12 2014թ.

Ձեր 28.10.2014թ. թիվ 2621/1483 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ

տիկին Հ. Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2014թ. հոկտեմբեր ամսին ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Գավառի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված խախտումները, թերությունները և դիտորդների խմբի աշխատանքները խոչընդոտելու հանգամանքն ուսումնասիրվել է ՀՀ ոստիկանության շտաբում, իսկ Գեղարքունիքի մարզային վարչությունում կատարվել է ծառայողական քննություն, որի արդյունքներով ներկայացվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները.

2. ՁՊՎ-ում պահվող կալանավորված անձինք սննդի տաքացման սենյակ մուտք չեն գործել և չեն սնվել, իսկ նրանց պատկանող հանձնուքները պահվել են նշված սենյակում իրենց իսկ խնդրանքով, ինչով որևէ իրավական ակտի պահանջ չի խախտվել:

3. Հաշվի առնելով կալանավորված անձանց կողմից դրսևորած վարքագիծը, երկու խցերի դռների դիտանցքները թողնվել են բաց վիճակում, որպեսզի վերջիններս անընդհատ հսկողության տակ պահվեն: Այս դեպքում էլ որևէ իրավական ակտի պահանջ կամ կալանավորվածների իրավունքները չեն խախտվել:

4. Դիտորդների խմբի այցելության օրը ՁՊՎ-ն չի ջեռուցվել կաթսայատանը որոշակի վերանորոգման աշխատանքներ կատարելու պատճառով: Նոյեմբերի 1-ից ՁՊՎ-ն ջեռուցվում է և ապահովվում է նախատեսված ջերմաստիճանը:

5. Խցերից մեկում (որտեղ տվյալ օրը անձինք չեն պահվել) երկու մահճակալների ներքնակները բացակայել են, քանի որ դրանք լրացուցիչ տրամադրվել են այլ խցերում պահվող կալանավորվածներին՝ վերջիններիս խնդրանքով:

9. Խցերի պատուհանները միշտ բացվել են և ներկայումս էլ բացվում են զբոսաբակի կողմից՝ աստիճանի օգնությամբ:

11. Կալանավորված Մ.Հունանյանը ձերբակալվել և ՁՊՎ է ընդունվել 12.08.2014թ.: 14.08.2014թ. նա տեղափոխվել է ՔԿՀ: Նշված երկու օրվա ընթացքում վերջինս ստացել է հանձնուք և տրամադրվել է տեսակցություն, ինչի մասին էլ նա հայտնել է դիտորդների խմբի անդամներին:

Հարկ է նշել, որ ոստիկանները ոչ մի դեպքում որևէ կերպ ճնշում չեն գործադրում ՁՊՎ-ում պահվող անձանց վրա: Մ.Հունանյանը որպես կալանավոր ոստիկանության Գավառի բաժնի ՁՊՎ-ում պահվել է նաև 2014թ. հոկտեմբերի 14-ից մինչև 17-ը և հոկտեմբերի 21-ից մինչև 24-ը: Վերջին երկու անգամ ՁՊՎ-ում պահվելու ընթացքում կալանավոր Մ.Հունանյանը հանձնունք չի ստացել և նրան տեսակցություն չի տրամադրվել:

12. Սուսաննա Հովիկի Կարապետյան տվյալներով անձ ոստիկանության Գավառի բաժնի ՁՊՎ-ում ընդհանրապես չի պահվել և անհասկանալի է թե դիտորդների խումբը որտեղից է այդպիսի տվյալներ արձանագրել:

Հ.Շաբոյանին ՁՊՎ տարածքից դուրս քննչական գործողություններ կատարելու նպատակով տեղափոխման հայտը դրվել է նրա անձնական գործի մեջ և փոխանցվել է ՔԿՀ, այդ պատճառով հնարավոր չի եղել ներկայացնել դիտորդների խմբին:

13. Դիտորդների խմբի անդամներին ոստիկանության Գավառի բաժնի հերթապահ մասի պետի ժամանակավոր պաշտոնակատարը հնարավորություն չի ունեցել ներկայացնել որոշակի փաստաթղթեր, քանի որ դրանք գտնվել են անձնական գործերում, իսկ անձնական գործերը հերթապահ մասի պետի կողմից, որը ժամանակ առ ժամանակ ներկայացել է աշխատանքի վայր, պահվել են իր աշխատասենյակում:

Գրության 1-ին, 6-րդ, 7-րդ, 8-րդ և 10-րդ կետերով նշված, ինչպես նաև 2-րդ կետով՝ սննդի տաքացման սենյակի ոչ սանիտարահիգիենիկ վիճակի վերաբերյալ հանգամանքները ծառայողական քննության ընթացքում հիմնավորվել են, ինչի համար ոստիկանության Գավառի բաժնի հերթապահ մասի պետի ժամանակավոր պաշտոնակատարը, ավագ տեսուչ հերթապահը, ՁՊՎ-ի երկու հերթապահ ոստիկաններ խիստ նախազգուշացվել են:

ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության ղեկավարության կողմից Գավառի բաժնի պետին հանձնարարվել է վերը նշված հանգամանքները քննարկել օպերատիվ խորհրդակցությունում, սեղմ ժամկետում վերացնել տեղ գտած թերություններն ու խախտումները, կարգավորել արձակուրդ մեկնող ծառայողների կողմից փաստաթղթերի հանձման գործընթացը, ինչպես նաև հրահանգավորել ՁՊՎ վարչակազմին պատշաճ կերպով համագործակցել դիտորդների խմբի հետ:

ՀՀ ոստիկանության շտաբ